

ԳՎՍԻՎՍ ԻԼ:

Մէտէլը հինուրէն դաստաստանը, ու գլխէկականացնելը, ծնածնէրոնն ու մեռնողնէրոնն լիւր:

1. **Ն**րբոր վէննա մէկը կըմեռնի՝ պէտք է որ իր բժիշկը մեռնողին հաւատքը, տարիքը, հայրենիքը, անունը, մականունը, ցեղը, վիճակը ու հիւանդութիւնը թղթի մը վրայ գրէ: Եւ թուղթը մեռելներուն դատաստանը կըխրկուի, ու հոն տեղէն մարդ կուգայ, մեռելին մարմինը կըքննէ, որ չըլլայ թէ թուկով, սրով, կամ ուրիշ տեսակ բռնութեամբ սպաննուած կամ մեռած ըլլայ: Թէ որ ասանկ բաներուն շան մը կայ նէ, աղէկ մը քրննելու համար մեռելը դատաստան կըխրկէ, չէ նէ քառասունըութը ժամ ետքը թաղելու հրաման կըտրուի: Թէ որ փոխադրական հիւանդութեամբ մեռած է նէ, մեռնողին անկողինը ու հիւանդութեան մէջը գործածած լաթերը բոլոր կառնուն՝ կըմաքրեն, նոյնպէս պառկած սենեակըն ալ յառաջ կըգոցեն, ու վերջէն կուգան կըմաքրեն: Եւմէն որ մեռնողներուն ցանկը կըտպեն, ու դուրս կուտան: Երբեմն օրը Յէն ինչվան 36 հոգիի չափ մեռած կըլլայ: Եւնան ու գարնան աւելի շատ կըմեռնին:

2. Մեռելները յառաջուց ժամերը կըթաղեն եղեր, 1784ին Յովսէփի կայսրը գէշ հոտը քաղքին մէջէն վերցընելու համար արգելած է, ու քաղ-

քէ դուրս հինգ կողմը հինգ գերեզմաննոց որոշած է, ու հիմայ ամէն մէկին մօտը մեռածները կը տանին հոն տեղերը կը թաղեն: (Տէ՛ս Եր. 30):

3. Հասարակօրէն տարին 12,000էն ինչպան 13,500 տղաք կը ծնանին, ու սուրբ մկրտութիւն երկրորդ ծննդեան կը հասնին:

4. Տարին 10,411էն ինչպան 11,828 մարդ կը մեռնի. անանկ որ հասարակ կարգով տարին մարդիկներու քսանըվեցերորդ մասը կը մեռնին:

ԳՎՈՒՍ ԻԸ:

Կերպիւթէնները, Բնախարանները, ու լատեր-
փայտը:

1. Ատելու ու խմելու պէտք եղած բաները ամէն տարի միօրինակ չեն, երբեմն քիչ երբեմն շատ կուգան. չափաւոր եկած տարի մը 28,592 եզ, 67,030 գիրցուցած հորդ, 12,569 գառն, 71,554 խոզ 6,889,607 հաւկիթ, 300 կշիռ (խանութար) ձուկ, 26,948 կշիռ կարագ ու արդար իւղ, 4,188 կշիռ պանիր, 12,691,800 օխայ տեսակ տեսակ գինի, 40,688,080 օխայ գարեջուր (պիււոս) 85,530 կշիռ ալիւր, 21,055 կշիռ տան հաց,